ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 1
ՀՀ Վայոց ձորի մարզխորհրդի արտագնա նիստի

ք. Վայք 07.03.2018թ.

Մարզխորհրդի նիստը նախագահում էր ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հ. Սարգսյանը
Քարտուղարում էր ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետ Հ. Կարապետյանը

Մարզխորհրդի նիստին մասնակցում են՝ ՀՀ վարչապետ Կ. Կարապետյանը, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարար Դ. Լոքյանը, մարզպետի տեղակալները, մարզպետարանի աշխատակազմի ղեկավարը, համայնքների ղեկավարներ, նիստին հրավիրված ու մասնակցում են նաև՝ մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարներ ու ՀԼՄ ներկայացուցիչներ:

ՀՀ վարչապետը ,,2017 թվականի սոցիալ-տնտեսական իրավիճակի և 2018 թվականի աշխատանքային գործունեության մասին.. հարցը ներկայացնելու համար ձայնը տվեց ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հ. Սարգսյանին:Վերջինս հանդես եկավ զեկուցմամբ, նշեց,որ եթե ներկայացնելու լինենք տնտեսական ցուցանիշները, ապա հանրապետության համախառն ներքին արդյունքի ցուցանիշում մարզի մասնաբաժինը կազմում է 1.4 %: Համախառն ներքին արդյունքի մեկ շնչին բաժին ընկնող մասը կազմում է 1 մլն 357.8 հազ. դրամ:

Համախառն արդյունաբերական արտադրանքի ծավալը 2016թ. կազմել է 16.184 մլրդ դրամ, 2017թ.՝ 16.544 մլրդ դրամ, որից մեկ շնչին բաժին է հասնում 332 հազ. դրամ:

Գյուղատնտեսական համախառն արտադրանքը 2016թ. կազմել է 21.8 մլրդ դրամ, 2017թ. կազմել է 23.8 մլրդ դրամ, որից մեկ շնչին բաժին է հասնում 477.9 հազ. դրամ, որը 1.7 անգամ մեծ է հանրապետության միջին ցուցանիշից: Աճը կազմել է 2 մլրդ դրամ:

Մարզում առևտրաշրջանառությունը 2016թ. կազմել է 5.2 մլրդ դրամ, իսկ 2017թ.՝ 7.3 մլրդ դրամ, որից մեկ շնչին բաժին է հասնում 146.5 հազ դրամ: Աճը կազմել է 2.1 մլրդ դրամ:

Մարզում ծառայությունների ծավալը 2016թ. կազմել է 6.7 մլրդ դրամ, իսկ 2017թ.՝ 8.3 մլրդ դրամ, որից մեկ շնչին բաժին է հասնում 166.6 հազ դրամ: Աճը կազմել է 1.6 մլրդ դրամ:

Մարզում շինարարության ծավալը 2016թ. կազմել է 7.2 մլրդ դրամ, իսկ 2017թ.՝ 37.8 մլրդ դրամ, որից մեկ շնչին բաժին է հասնում 759 հազ. դրամ, որը 5.8 անգամ մեծ է հանրապետության միջին ցուցանիշից: Աճը կազմել է 30.2 մլրդ դրամ:

Մարզում արտահանման ծավալը 2016թ. կազմել է 2.6 մլրդ դրամ, իսկ 2017թ.՝ 3.2 մլրդ դրամ, որից մեկ շնչին բաժին է հասնում 64.3 հազ. դրամ:

Մարզում ներմուծման ծավալը 2016թ. կազմել է 11.6 մլրդ դրամ, իսկ 2017թ.՝ 12.1 մլրդ դրամ, որից մեկ շնչին բաժին է հասնում 242.9 հազ. դրամ:

ՀՀ Վայոց ձորի մարզում գործում են 2016 թ.՝ 301, 2017թ.՝ 295 առևտրի օբյեկտ՝ 874 աշխատատեղով:

Մարզում միջին արտադրական և առևտրային կազմակերպությունների թիվը 5 է՝ 294 աշխատատեղով:

2016թ. մարզում ներդրումների ծավալը կազմել է 10.6 մլրդ դրամ, 2017թ.՝ 104.5 մլրդ դրամ, 2018թ. տարեկան աշխատանքային պլանով նախատեսվել է 64.816 մլրդ

դրամ ներդրում, համապատասխանաբար մեկ շնչի հաշվով 2016թ. կազմել է 206 հազ. դրամ, 2017թ՝ 2.1 մլն դրամ, իսկ 2018թ. կկազմի 1.3 մլն դրամ:

2016թ. տարբեր ներդրումների հաշվին ստեղծվել է 156 հիմնական աշխատատեղ, 2017թ.՝ 910 հիմնական և 943 ժամանակավոր աշխատատեղ:

2018թ. տարեկան աշխատանքային պլանով նախատեսվում է 1400 հիմնական և ժամանակավոր աշխատատեղերի ստեղծում:

2016թ. մասնավոր հատվածում կատարվող ներդրումները կազմել են 4.6 մլրդ դրամ, 2017թ.՝ 100 մլրդ 353 մլն դրամ, իսկ 2018թ. նախատեսվել են 55 մլրդ 236 մլն դրամի ներդրումներ՝ հանքարդյունաբերության, կաթի ու կաթնամթերքի արտադրության, միրգ-բանջարեղենի վերամշակման ու չրերի արտադրության, տեքստիլ արդյունաբերության, զբոսաշրջության և այլ ոլորտներում:

ՀՀ Վայոց ձորի մարզպետի 05.03.2018 թվականի թիվ 26 կարգադրությամբ մարզպետարանում վարչական ռեգիստրի ինստիտուտի ներդրման նպատակով ստեղծվել է աշխատանքների համակարգման խումբ, որը զբաղվելու է համայնքներից վիճակագրական տվյալների հավաքագրմամբ և ըստ անհրաժեշտության՝ տարբեր գերատեսչական մարմիններին տեղեկատվության տրամադրման հարցերով:

Պետություն – համայնք - մասնավոր համագործակցության շրջանակներում այժմ բանակցություններ են վարվում սահմանամերձ Խաչիկ գյուղի դպրոցի մասնաշենքի տարածքից 330 քառ. մետր մասնավորին անհատույց հատկացնելու շուրջ՝ տրիկոտաժի արտադրամաս հիմնելու համար: Ծրագրի արդյունքում 2018-ին կստեղծվի 50 նոր աշխատատեղ, հետագայում այն կհասնի մինչև 100-ի: Բանակցություններ են վարվում նաև Հորս գյուղի դպրոցի 36 քառ. մետր տարածքով կաթսայատունը մասնավորին անհատույց հատկացնելու շուրջ՝ մրգերի սառնարան ստեղծելու համար: Ծրագրի արդյունքում կստեղծվի 6-8 նոր աշխատատեղ:

Ֆինանսներ

Մարզի՝ թվով ութ համայնքների 2017թ. տեղական բյուջեների եկամուտների փաստացի մուտքերը կազմել են 1 մլրդ 836,4 հազ. դրամ, որը տարեկան նախատեսվածից ավել է 18.5 մլն դրամով, կամ կատարվել է 101%-ով, իսկ սեփական եկամուտների հավաքագրումը կազմել է 726,6 մլն. դրամ կամ կատարվել է 100,9%-ով:

2016թ. տարեկան ցուցանիշների համեմատությամբ 2017թ. սեփական եկամուտներն ավել են հավաքագրվել 147.0 մլն դրամով կամ 25,4%-ով: Մարզի համայնքների 2018 թվականի տեղական բյուջեների եկամտային մասի ընդամենը եկամուտները պլանավորվել են 1 մլրդ 952,7 հազ. դրամ, իսկ սեփական եկամուտները՝ 899,1 մլն դրամ: 2018թ. մարզի համայնքների սեփական եկամուտների հանրագումարը 2017 թվականի համեմատությամբ նախատեսվել է ավել հավաքագրել 172.5,0 մլն դրամով կամ 23,7%-ով:

2017թ. սոցիալական ծախսերին ուղղված գումարը տեղական բյուջեների ընդամենը ծախսերի մեջ կազմել է՝ 3.7%:

2018թ. այդ նպատակին ուղղված ծախսերը կազմում են ընդամենը 1,84%, որը պակաս է նախորդ տարվանից 1,86%-ով:

2017թ. տեղական բյուջեների ֆոնդային մասի փաստացի ծախսերի հանրագումարը կազմել է 314.3 մլն դրամ, որը 2016թ. ֆոնդային բյուջեի ծախսերի նկատմամբ պակաս է 41.1 մլն դրամով կամ 11.6%-ով:

2018թ. համայնքների բյուջեների ֆոնդային մասը կազմում է՝ 484,1 մլն դրամ:

2016թ. մարզի բնակչության մեկ շնչին ընկնող սեփական եկամուտը կազմել է 9,6 հազ. դրամ, 2017թ.՝ 12,0 հազ. դրամ, իսկ 2018թ. կանխատեսվում է հասցնել 14,8 հազ. դրամի:

Աղբահանություն

Մարզում գույքագրված աղբավայրերի թիվը 129 է, գործող հիմնական աղբավայրերի թիվը՝ 13-ն է, փակված աղբավայրերի թիվը ՝ 112, փակման ենթակա աղբավայրերի թիվը 4-ն է: 4 փակման ենթակա չշահագործվող աղբավայրերը 2018 թվականին պետական բյուջի միջոցների հաշվին նախատեսվում է փակել (Մալիշկա, Քարագլուխ, Վերնաշեն, Սալլի):

Համայնքներում 2017 թվականին տնային տնտեսությունների հետ կնքվել է 6360 պայմանագիր, տնտեսվարող սուբյեկտների հետ՝ 516 պայմանագիր (ընդամենը մարզում՝ 16449 տնտեսություն և 894 տնտեսվարող սուբյեկտ):

Կանխատեսվում է 2018 թվականին տնտեսությունների հետ կնքված պայմանագրերը թիվը հասցնել 13160, այսինքն առկա տնտեսությունների 80%-ը և իրավաբանական անձանց կամ տնտեսվարող սուբյեկտների պայմանագրերի թիվը հասցնել 100%-ի, այսինքն 894-ի:

2017թ. աղբահանության վճարներից գանձումը կազմել է 43,5 մլն դրամ, որից 21,1 մլն դրամը մուտք է եղել համայնքային բյուջե, մնացած 22,4 մլն դրամը համայնքների կողմից ստեղծված ՀՈԱԿ-ների և մասնագիտացված կազմակերպությունների հաշվարկային հաշիվներին:

2017թ. սանմաքրման և աղբահանության ծախսը կազմել է 153,6 մլն դրամ, որից 65,7 մլն դրամը ուղղվել է աղբահանությանը: Աղբահանության համար հավաքագրված գումարները կազմել են աղբահանությանն ուղղված ծախսերի ընդամենը 66,2%-ը, ընդհանուր ծախսերում կազմել է 28.3%:

2018թ. աղբահանությունից մուտքերը նախատեսվում է հասցնել 82,8 մլն դրամի, սակայն աղբահանության ծախսը կազմում է 96,7 մլն դրամ, 13,9 մլն դրամով ծախսերը գերազանցում են հավաքագրված գումարներին:

Առաջարկվել է համայնքների ղեկավարներին բյուջեներում կատարել համապատասխան փոփոխություններ, ծախսերը համապատասխանեցնել եկամուտներին, որպեսզի աղբահանությունը կատարվի ինքնածախսափակման եղանակով:

Գյուղատնտեսություն

Մարզում ձևավորվել 11249 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսություն, գործում են 169 ֆերմերային տնտեսություններ, որից՝

փոքր տնտեսություն՝ 115

միջին տնտեսություն՝ 28

խոշոր տնտեսություններ՝ 26

Մարզի ոռոգելի հողատարածքները կազմում են 6534 հա, որից վարելահող՝ 2693 հա, կամ ընդհանուր վարելահողերի 17 տոկոսը: 2018թ. տարեկան աշխատանքային պլանով նախատեսվում է ոռոգվող հողերը ավելացնել ևս 10 հա-ով:

ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի ղեկավարության հետ քննարկվել է մարզի երեք՝ Ելփին, Խաչիկ, Վերնաշեն բնակավայրերում փոքր ջրամբարների կառուցման հնարավորությունները, տրվել տնտեսական և ֆինանսական գնահատական, որի իրականացման արդյունքում ոռոգելի հողատարածությունները կավելանան ևս 1500 հեկտարով:

2016թ. խաղողի տնկարքները կազմել են 1066 հա, համախառն բերքը՝ 1978 տոննա, 2017թ. տնկարքները կազմել են 1200 հա, համախառն բերքը՝ 4065 տոննա /մթերվել է 2364/, 2018թ. կանխատեսվում է արտադրել 4470 տոննա խաղող:

2016թ. պտղի և հատապտղի տնկարքները կազմել են 2138 հա, համախառն բերքը՝ 4976 տոննա, 2017թ. տնկարքները կազմել են 2514 հա, համախառն բերքը՝ 8100 տոննա, 2018թ. կանխատեսվում է արտադրել 8900 տոննա պտուղ և հատապտուղ:

2017 թվականին նախորդ տարվա համեմատությամբ խաղողի արտադրությունն ավելացել է 205.3, իսկ պտղինը՝ 162.0 %-ով:

Գյուղատնտեսության համախառն արտադրանքի 60-65 տոկոսը ստացվում է անասնապահությունից: 2017թ. արտադրվել է 26500 տոննա կաթ, 7100 տոննա միս, 22 մլն հատ ձու և այլ մթերքներ:

Գյուղատնտեսական նշանակության հողերն ավելի արդյունավետ օգտագործելու նպատակով նախատեսվում է 2018թ. նախորդ տարվա համեմատությամբ ցանքատարածություններն ավելացնել շուրջ 700 հեկտարով: Հարցը հանագամանորեն քննարկվել է համայնքների ղեկավարների հետ:

Մարզում գործում են կաթի վերամշակման 5 ձեռնարկություն, 2017-ին մթերվել է 1530 տոննա կաթ՝ նախորդ տարվա 1140 տոննայի համեմատ, արտադրվել է 190 տոննա պանիր, նախորդ տարվա 155 տոննայի դիմաց: Նշված ձեռնարկություններում 40 մարդ ապահովված են մշտական աշխատանքով՝ նախորդ տարվա 20-ի համեմատ:

Մարզի 11 խաղող վերամշակող ձեռնարկություն 2017թ. մթերել են 1129 տոննա խաղող՝ նախորդ տարվա 870-ի համեմատ, արտադրել են 778 հազ. լիտր գինի, որը կազմում է հանրապետական արտադրանքի 8.8%-ը: Մնացած 1235 տոննա խաղողը մթերել են մարզից դուրս գործող գինու գործարանները:Մարզում մթերված 1 կգ խաղողի դիմաց վճարվել է 298 դրամ: Խաղող վերամշակող ձեռնարկություններում 120 մարդ ապահովված են մշտական, իսկ 130 մարդ ժամանակավոր աշխատանքով: Նախորդ տարվա համեմատ՝ մշտական աշխատողների թիվը ավելացել է 25-ով, ժամանակավոր աշխատողներինը՝ 35-ով:

2016թ. մարզի տարածքում գործել են 5 չրի չորանոց՝ արտադրելով 41 տոննա չիր, 2017թ. չորանոցների թիվը ավելացել է 2-ով՝ արտադրվել է 68 տոննա չիր, կամ աճը կազմել է 165%: Նախատեսվում է 2018թ. չորանոցների թիվը ավելացնել ևս 2-ով, իսկ արտադրության ծավալը հասցնել 100 տոննայի: Չորանոցներում աշխատում են 39 մարդ՝ նախորդ տարվա 22-ի համեմատ:

Եղեգնաձորի պահածոների գործարանը 2017թ. մթերել է 1700 տոննա պտուղ-բանջարեղեն՝ նախորդ տարվա 1050-ի համեմատ: Գործարանում 30 մարդ ապահովված են մշտական և 120 մարդ՝ ժամանակավոր աշխատանքով: Նախորդ տարվա համեմատ՝ մշտական աշխատողների թիվը ավելացել է 10-ով, իսկ ժամանակավոր աշխատողների թիվը՝ 52-ով: Արտադրված մթերքների իրացման գործում դժվարություններ չկան:

2017թ. օգոստոս ամսին շահագործման հանձնվեց Զառիթափի սպանդանոցը, որտեղ 1 հերթափոխում հնարավոր է մորթել 25 գլուխ խոշոր, 300 գլուխ մանր եղջերավոր անասուն: Ստեղծվել է 10 մշտական աշխատատեղ: 2017թ. սպանդի արդյունքում 200 ցենտներ միսը արտահանվել է Իրանի Իսլամական Հանրապետություն:

Մարզում գործում են 19 սառնարային տնտեսություն՝ 780 տոննա տարողությամբ, նախատեսվում է 2018թ. սառնարային տնտեսությունների թիվն ավելացնել ևս 5-ով՝ 220 տոննա տարողությամբ:

Մարզում զգալի աշխատանքներ են տարվում կենդանիների տոհմային կազմի բարելավման ուղղությամբ: «Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ-ի

շահագործման նախապատրաստական ծրագիր)՝ 1 մլրդ 450 մլն դրամ («Վայք Գոլդ» ՍՊԸ),

2. Վայք քաղաքում արևային կայանի կառուցում՝ 550 մլն դրամ,
3. Վայք քաղաքում հանդիսությունների և առևտրի սրահների, ժամանցի կենտրոնի կառուցում (Լիդեր կոմպլեքս) ՍՊԸ՝ 72.75 մլն դրամ,
4. Չիվա-Ռինդ բնակավայրերի սահմանահատվածում համալիրի կառուցում՝ 750 մլն դրամ (Տերտերյան Տրադե ՍՊԸ),
5. Արենիի գինու Ռեզորթի կառուցում (Թուֆենկյաններ հիմնադրամ)- 400 մլն դրամ,
6. Ջերմուկ քաղաքում Ռոյալ-Ռեսթ հյուրանոցի կառուցում՝ 241.5 մլն դրամ,
7. Ջերմուկ քաղաքում Ռեզորդ հյուրանոցի կառուցում՝ 483 մլն դրամ,
8. Ջերմուկ քաղաքում հյուրանոցի կառուցում («էյջ-էմ-թի» ՍՊԸ)՝ 241 մլն դրամ և այլն:

- Եվրոմիության դրամաշնորհային միջոցներով՝ 525 մլն դրամ,
- Բարեգործական կազմակերպությունների ֆինանսավորմամբ՝ 65 մլն դրամ,
- Համայնքայի բյուջեով՝ 271.77 մլն դրամ,
- Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի միջոցներով՝ 610.84 մլն դրամ,
- ՀՀ պետական բյուջեով՝ 4 մլրդ 345.86 մլն դրամ:

Կրթության ոլորտ

Վայոց ձորի մարզում գործում են 48 հանրակրթական և ավագ դպրոց, որտեղ սովորում են 6368 աշակերտ: Աշխատում են 1068 ուսուցիչ, որոնցից 971-ն ունեն բարձրագույն մանկավարժական կամ բարձրագույն կրթություն (մոտ 90%-ը), մնացած 97-ը՝ միջնակարգ մասնագիտական:

Մարզում գործում են տարածաշրջանային պետական քոլեջ և Երևանի պետական տնտեսագիտական համալսարանի Եղեգնաձորի մասնաճյուղը:

ՈՒսումնաօժանդակ անձնակազմի աշխատողների թիվը 485 է:

ՈՒսուցիչ/աշակերտ հարաբերակցությունը կազմում է 1:6:

Դասարանի միջին խտությունը 12,7 է:

Ուսուցչի միջին ծանրաբեռնվածությունը կազմում է շաբաթական 17 ժամ:

Հաջողությամբ իրականցվում է «Կայուն դպրոցական սնունդ» ծրագիրը: Մարզի բոլոր հանրակրթական դպրոցների 1-4 րդ դասարանների 2401 երեխա դպրոցում ստանում են սնունդ:

ԴՏՀՏՇՀ-ի (դասագրքերի և տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների շրջանառու հիմնադրամ) կողմից մարզի 1-ին, 2-րդ և 3-րդ դասարանների 1794 աշակերտի հատկացվել են ուսումնական պլանշետներ: Դրանց օգտագործման նպատակով վերապատրաստվել են 1-ին, 2-րդ և 3-րդ դասարաններում պարապող բոլոր դասվարները: Գործում են 25 նախակրթարան, որոնցից 14-ը՝ դպրոցներում:

Դպրոցներում գործող նախակրթարաններում ընդգրկվել են 151 երեխա:

2018թ. նախատեսվում է բացել ևս 8 նախակրթարան:

Մարզի 9 հանրակրթական դպրոցում գործում են ռոբոտաշինության կաբինետներ, որոնցում ընդգրկված են 167 աշակերտ:

2017թ. մարզի 52 աշակերտ մասնակցել են հանրաետական օլիմպիադաների, որոնցից 11-ը պարգևատրվել են դիպլոմներով և գովասանագրերով:

Մարզի 10 դպրոցում իրականացվում է ներառական կրթություն, որին ընդգրկված են 155 երեխա:

միջոցով 2017թ. 980 գլուխ կով ենթարկվել են արհեստական սերմնավորման՝ նպատակ ունենալով ավելացնել Շվից, Հոլշտեյն, Սիմենթալ և Կովկասյան գորշ ցեղի կենդանիների գլխաքանակը: 2018թ. նախատեսվում է սերմնավորել ևս 2500 գլուխ կով:

Մարզում առկա է 663 միավոր գյուղտեխնիկա, որից սարքին է 553-ը (83%), 2017թ. ֆինանսական վարձակալության լիզինգով ձեռք է բերվել մեկ միավոր գյուղտեխնիկա, 2018թ. շահառուների թիվը կավելանա 3-ով:

2017 թվականին տարածքային զարգացման հիմնադրամի և սոցիալական ներդրումների միջոցներով որպես դրամաշնորհ Զառիթափի համայնքին հատկացվել է մեկ հատ հացահատիկահավաք կոմբայն և վեց հատ տարբեր մակնիշի տրակտոր, Ջերմուկի խոշորացված համայնքը ստացել է 2 հատ «Բելոռուս» մակնիշի տրակտոր, 1 հատ սրսկիչ մեքենա և 1 հատ խոտհնձիչ: Առաջիկայում Զառիթափում շահագործման կհանձնվի մեքենատրակտորային պարկը, որը կունենա 16 անուն գյուղատնտեսական տեխնիկա և գործիքներ:

Աշխատանքներ են տարվում Զառիթափի օրինակով Արենի և Ջերմուկ խոշորացված համայնքներում՝ մեքենատրակտորային պարկի ստեղծման ուղղությամբ:

ՀՀ գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի Վայոց ձորի մարզային կառույցին ներկայացվել են 735 հայտ, որոնք միտված են բուսաբուծության և անասնաբուծության զարգացմանը: Այսօրվա դրությամբ 78 շահառուի տրվել է 334 մլն դրամի սուբսիդավորված վարկ, որի 70%-ն ուղղված է անասնապահությանը, իսկ 30%-ը՝ այգիներ հիմնելուն, չրերի արտադրություն կազմակերպելուն, սառնարանային տնտեսություն հիմնելուն:

2017թ. ունեցել ենք 30 հա ինտենսիվ այգի, 2018թ. կանխատեսվում է հիմնել ևս 25հա:

2017թ. մարզի գյուղատնտեսական բնագավառում պետական, միջազգային և այլ դոնոր կազմակերպությունների, մասնավոր ներդրողների կողմից իրականացվել են շուրջ 430.3 մլն դրամի աշխատանքներ: 2018 թ. նախատեսվում են 755 մլն դրամի ներդրումներ, որոնց արդյունքում կստեղծվեն 200 նոր հիմնական և ժամանակավոր ախատատեղ:

Քաղաքաշինության ոլորտ

2017թ. ընթացքում մարզում իրականացվել է 104 մլրդ 515 մլն դրամի ներդրում, որից 94 մլրդ 141 մլն դրամը «Լիդիան Արմենիա» կազմակերպության կողմից իրականացվող Ամուլսարի ոսկու հանքի ներդրումն է:

2017թ. մարզում կատարված շինարարական աշխատանքների ծավալը կազմել է 37 մլրդ 838 մլն դրամ:

2018թ. նախատեսվում է մարզում իրականացնել 64 մլրդ 816 մլն դրամի կապիտալ ներդրումներ, որից «Ամուլ» սարի ոսկու հանքը 50 մլրդ. 232 մլն դրամ:

2018թ-ին շինարարական աշխատանքների ծավալը մարզում նախատեսվել է կատարելու 28 մլրդ. 825 մլն. դրամի, որից՝

- Ամուլսարի ոսկու հանքը՝ 15 մլրդ 70 մլն դրամ,
- Իրան-Հայաստան 400 կվտ երրորդ բարձրավոլտ էլ. գծի կառուցում 669.15 մլն դրամ (Վայոց ձորի տարածք),
- «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից օդային էլ. գծի կառուցում և վերանորոգում՝ 66.5 մլն դրամ
- մասնավոր ներդրումներ՝ 4 մլրդ 213.75 մլն դրամ, այդ թվում՝
  1. Արինի համայնքում բազմամետաղային հարստացուցիչ ֆաբրիկայի կառուցում (Ազատեկի ոսկի-բազմամետաղային հանքավայրի

Մարզի 17 մանկապարտեզից գործում են 15-ը, որոնցում ընդգրկված են 1145 նախադպրոցական տարիքի երեխա: Նրանց հետ աշխատում են 85 դաստիարակ՝ 42 խմբով:

2017թ. ՀՀ կառավարության որոշմամբ Եղեգնաձորի և Վայքի քաղաքային պետական հանրակրթական վարժարանները վերակազմակերպվել են միացման ձևով՝ միավորվելով համապատասխանաբար Եղեգնաձորի և Վայքի ավագ դպրոցների հետ:

Մարզի դպրոցներում լուրջ ուշադրություն է դարձվում օտար լեզուների դասավանդմանը: Բոլոր դպրոցները՝ բացի Բարձրունու միջն. դպրոցից, ապահովված են բարձրագույն կրթությամբ մասնագետներով: Նոր ուսումնական տարում կլուծվի նաև այդ խնդիրը:

Հատուկ ուշադրության է դարձվում ֆիզիկական և ռազմահայրենասիրական դաստիարակության հարցերին:

Մարզի դպրոցներում աշխատում են 61 ֆիզկուլտուրայի ուսուցիչ, որոնցից 44-ն ունեն բարձրագույն կրթություն: 38 դպրոց ունեն մարզադահլիճներ, իսկ մարզի 4 համայնքում գործում են մարզադպրոցներ, որտեղ աշխատում են 13 մարզիչ, ընդգրկված են 375 երեխա:

Բոլոր դպրոցներում կահավորված են ռազմագիտության կաբինետները մասնագիտական նորագույն պաստառներով, ապահովված են ուսումնական զենքով:

Մարզի 41 բնակավայրում գործում են 36 մշակութի տուն և 41 գրադարան:

Մարզում գործում են 4 արվեստի, 1 երաժշտական դպրոց, որոնցում աշխատում են 98 մանկավարժ, ընդգրկված են 801 աշակերտ:

Կրթական հաստատությունների կառավարման արդյունավետության և կրթության որակի բարձրացման նպատակով մարզպետարանի 2018թ. գործունեության ծրագրում ընդգրկվել են հետևյալ միջոցառումները.

1. փոքրաթիվ աշակերտ ունեցող դպրոցների աշակերտների ընդգրկում մոտակա բնակավայրի համեմատաբար շատ աշակերտ ունեցող դպրոցի աշակերտական համակազմում՝ նրանց կրթությունը կազմակերպելով տեղի դպրոցական շենքում,
2. դպրոցներում ժամանակակից սմարթ-դասարանների ստեղծում:
3. հեռավար տեսադասերի անցկացում՝ ապահովելով տեսակապ աշակերտների և դասը վարողների միջև,
4. ուսումնական ծրագրերով հագեցված գրասալիկներով (պլանշետներով) աշակերտների ապահովում,
5. սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերի դպրոցները կադրերով ապահովելու նպատակով տեղացի բարձրագույն կրթություն ունեցող մասնագետներին հնարավորություն տալ վերապատրաստման միջոցով համալրելու մանկավարժների թափուր տեղերը:

Առողջապահություն

Մարզում գործում են 8 բժշկական հաստատություն, որից 3 բժշկական կենտրոն մատուցում են արտահիվանդանոցային և հիվանդանոցային (85 մահճակալ հզորությամբ) ծառայություններ Եղեգնաձորի, Վայքի և Ջերմուկի տարածաշրջանների սպասարկման տարածքներում հաշվառված ազգաբնակչությանը, իսկ 5-ը՝ առողջության առաջնային պահպանման կենտրոններ են և մատուցում են արտահիվանդանոցային ծառայություններ:

Մարզի բուժական մանկաբարձական կետերի թիվը՝ 35 է:

Բուժհաստատություններում աշխատողների թիվը 2016թ. եղել է 431 մարդ, 2017թ.՝ 406 մարդ (նվազել է 6%-ով)՝ 90 բժիշկ, 203 միջին բուժ աշխատող և 113 այլ աշխատող:

ՀՀ Վայոց ձորի մարզի բուժհիմնարկների 2016թ. գլոբալ բյուջեն 618693.6 հազ. դրամ է, 2017թ. գլոբալ բյուջեն կազմել է 611 369.0 հազ. դրամ, որից 180447.7 հազ. դրամի հիվանդանոցային, իսկ 430921.8 հազ. դրամի արտահիվանդանոցային ծառայություններ:

Վճարովի ծառայությունը 2016թ. կազմել է 41612.8 հազ. դրամ, որը 2016թ. գլոբալ բյուջեի 6.7%-ն է կազմում (փաստացի եկամուտների 6.3%), 2017թ. վճարովի ծառայությունը 57 676.8 հազ. դրամ է, որը նախորդ տարվա համեմատությամբ ավել է 16064.0 հազ. դրամով կամ 38%-ով և կազմում է գլոբալ բյուջեի 9.4%-ը (փաստացի եկամուտների 8.6%):

2018թ. բուժհիմնարկների գլոբալ բյուջեն 580 518.5 հազ. դրամ է, որից հիվանդանոցային ծառայությունը կազմում է 151467.5 հազ. դրամ, իսկ արտահիվանդանոցային ծառայությունը՝ 429051.3 հազ. դրամ: Նախորդ տարվա համեմատությամբ գլոբալ բյուջեն նվազել է 5%-ով: Նախատեսվում է 2018թ. վճարովի ծառայությունները հասցնել 80760.8 հազ. դրամի, որը կազմում է տարեկան գլոբալ բյուջեի 14%-ը (փաստացի եկամուտների 12.2%):

Բուժհիմնարկների վճարովի ծառայությունները 2018թ. հունվար, փետրվար ամիսներին կազմել է 7493.8 հազ. դրամ, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի (5256.3 հազ. դրամ) համեմատ՝ ավելացել է 2237.5 հազ. դրամով կամ 42.5%-ով:

Դեբիտորական պարտքերը 01.01.2017թ. կազմել են 2411.3 հազ.դրամ, 01.01.2018թ.՝ 2957.7 հազ. դրամ, ավելացել է 546.4 հազ. դրամով կամ 22%-ով, կրեդիտորական պարտավորությունները՝ 01.01.2017թ. 20552.3 հազ. դրամ, 01.01.2018թ.՝ 13720.3 հազ. դրամ, նվազել է 6832.2-ով կամ 33%-ով, 2018թ. փետրվարի վերջին կրեդիտորական պարտքը կազմել է 11102.2 հազ. դրամ, նվազել է 2618.1 հազ. դրամով կամ 19%-ով:

2017թ. մարզի բոլոր բժշկական կազմակերպությունները միացել են առողջապահական միասնական էլեկտրոնային համակարգին:

«Լիդիան Արմենիա» հանքարդյունաբերական կազմակերպության կողմից Վայքի ԲՄ- ում կատարվել են 100435 ԱՄՆ դոլարին համարժեք ներդրումներ՝ վերելակ 1000կգ (12մարդ տարողությամբ), ձեռք են բերվել նոր բժշկական սարքավորումներ: Նույն կազմակերպության կողմից 2018թ. նախատեսվում է կատարել 45000 ԱՄՆ դոլարին համարժեք ներդրում:

2017թ. «Աղավնաձորի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ը բարերարի կողմից նվեր է ստացել սոնոգրաֆիայի ապարատ՝ 3 մլն դրամ արժողությամբ:

Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող վարկային ծրագրի շրջանակներում 2018թ. նախատեսվում է ՀՀ առողջապահական ծրագրերի գրասենյակի կողմից սկսել մարզային նոր բժշկական կենտրոնի նախագծման աշխատանքները, որի շինարարությունը կավարտվի 2019թ.:

Սոցիալական ոլորտ

Ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ նպաստի համակարգին պետական բյուջեից հատկացվող միջոցների հասցեականության ապահովման և նպատակային օգտագործման ուղղությամբ: 2016թ. ընթացքում նպաստ են ստացել 2019 ընտանիք, գումարը կազմել է 628300.0 հազ. դրամ: 2017թ. ընթացքում 2006 ընտանիք

նպաստ են ստացել, և վճարվել է 693 մլն դրամ, որը 2016թ. համեմատությամբ ավել է 67700.0 հազ. դրամով կամ 11%-ով:

Մարզում կենսաթոշակառուների թիվը 10245 է, որից 4231-ը՝ հաշմանդամության: Տարվա ընթացքում վճարվել է 4.9 մլրդ դրամ կենսաթոշակ:

Մարզի զբաղվածության տարածքային կենտրոններում 2017թ. գրանցված գործազուրկները 1147-ն են, նախորդ տարում կազմել են 1537 մարդ (նվազել է 390-ով կամ 25.4%-ով):

2017թ. աշխատանքի են տեղավորվել 383 մարդ, 2016թ.՝ 260 մարդ: Աշխատանքի տեղավորվածների թիվը ավելացել է 123-ով կամ 47%-ով:

Համաձայն Ազգային վիճակագրության ծառայության տվյալների՝ 2016թ. մարզում գործազրկությունը կազմում է 8.4%, իսկ աղքատությունը՝ 18.8%:

Տրանսպորտի ոլորտ

Ճանապարհաշինության բնագավառում ներդրումների ծավալը 2016թ. կազմել է 868.4 մլն դրամ, 2017թ.՝ 492.4 մլն դրամ, իսկ 2018թ. նախատեսվել է 2987.8 մլն դրամ /բարեկարգվելու են դեպի Հորբատեղ, Գետափ և Հերհեր բնակավայրեր տանող ճանապարհները/:

Վերջին տասնամյակի ընթացքում հիմնանորոգվել և բարեկարգվել են 50 կմ մարզային /տեղական/ նշանակության ավտոճանապարհներ: Մարզի բնակավայրեր տանող ճանապարհները բարեկարգելու համար անհրաժեշտ է հիմնանորոգել մարզային / տեղական/ և հանրապետական նշանակության ավտոճանապարհներից ևս 81 կմ (Մ2-Հերհեր ճանապարհահատվածի 10.8 կմ հիմնանորոգումն կսկսվի 15.03.2018թ.):

Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով չսպասարկվող բնակավայրերի թիվը 2017թ. 16 է, իսկ 2018թ. նախատեսվել է թիվը կրճատել 4-ով: Չսպասարկվող բնակավայրերում ուղևորափոխադրումներ չեն իրականացվում ճանապարհների վատ վիճակի և ուղևորահոսքի պակասի պատճառով:

2018թ. նախատեսվել է ավելացնել և թարմացնել երթուղիները սպասարկող շարժակազմը:

Զբոսաշրջություն

2017թ. զբոսաշրջիկների թիվը մարզում կազմել է 46000 մարդ, որը նախորդ տարվանից ավել է 9.5 %-ով: Ստեղծվել են 18 մշտական աշխատատեղ: 2018թ. ակնկալվում է, որ զբոսաշրջիկների թիվը կհասնի 50000-ի:

Մարզում գործում են 62 հյուրանոցային տնտեսություն, որոնցից 23-ը հյուրանոցներ են, 8-ը 'առողջարաններ, 31-ը՝ հյուրատներ: Մարզում գործում են 8 գինու համտեսի սրահներ, որոնցից 6-ը գտնվում են գինու արտադրամասերում:

Հայաստանի զբոսաշրջության զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող «20 անիրական իրականություն» ծրագրի շրջանակներում մշակվում է Վայոց ձորի մարզի պատմամշակութային հուշարձանները և հատուկ պահպանվող 5 տարածքները զբոսաշրջության վայր դարձնելու ծրագիրը, որը կավարտվի 2019թ.: 2018թ. մասնավորի կողմից կկառուցվի Ռինդ-Չիվա բնակավայրերի տարածքում զբոսաշրջային համալիր: Կներդրվի մոտավորապես 750 մլն դրամ, և կստեղծվեն մինչև 150 մշտական և ժամանակավոր աշխատատեղ: Թուֆենկյան հիմնադրամի կողմից կկառուցվի «Արենիի գինու ռեզորդը»՝ 4 մլրդ 620 մլն դրամ ընդհանուր արժեքով, որից 400 մլն դրամը կներդրվի 2018թ.: Կվերակառուցվեն 3 հյուրանոց Ջերմուկ քաղաքում և 1 հյուրանոց Վայք քաղաքում՝ ընդհամենը 972.5 մլն դրամ արժեքով: Կվերանորոգվեն Եվրոմիության դրամաշնորհային միջոցներով 13 հյուրատուն, կներդրվի 25 մլն դրամ: Ջերմուկ

քաղաքի զբոսաշրջային գրավչությունը բարձրացնելու նպատակով ՀՀ կառավարության վարած քաղաքականության արդյունքում 2019թ. Ջերմուկը կդառնա հանրապետության առողջարանային և զբոսաշրջային կենտրոններից մեկը:

Վարչապետը զեկուցման ընթացքում անմիջապես ընդհատում էր այն և կոնկրետ հարցեր էր ուղղում ոլորտների պատասխանատուներին ու համայնքների ղեկավարներին: Վերջինս հետաքրքրվեց ըստ տարեթվերի ներդրումների և կատարված կապիտալ շինարարության ծավալների, ստեղծված աշխատատեղերի, գործազրկության մակարդակի, առևտրի և ծառայությունների որակի, ազգաբնակչության բուժսպասարկման՝ վճարովի ծառայությունների ավելացման հնարավորությունների, համայնքներում իրականացվող գյուղատնտեսական աշխատանքների, իրականացվող աղբահանության և սանմաքրման, սեփական եկամուտների հավաքագրման, բիզնեսծրագրերի իրականացման, ճանապարհաշինության և հանրակրթության, սպորտի, մշակույթի, առանձին ոլորտների մասնագետ կադրերի պակասի ու նմանատիպ այլ հարցերով:

Դիմելով մասնակիցներին վարչապետը նշեց, որ մարզը հանրապետության կոմպակտ և դինամիկ զարգացող տարածաշրջաններից է, մարդիկ իրար լավ ճանաչում են, մարզից ներկայացված շատ բիզնես ծրագրեր արժանացել են կառավարության հավանությանը, դրանց մի մասը արդեն իրագործվում է, բացի դա մարզն իր աշխարհագրական դիրքով, բարեխառն կլիմայով, հարուստ պատմաճարտարապետական և բնական հուշարձաններով նպաստավոր է ինտենսիվ գյուղատնտեսության և զբոսաշրջության զարգացման համար, որը կնպաստի գործազրկության մակարդակի նվազմանը: Մտահոգիչ գտավ, մեկ շնչին ընկնող եկամուտների ցածր մակարդակը և առաջարկեց այն հասցնել հանրապետական միջինին: Աններելի համարեց աղբահանության պայմանագրերի կնքման մակարդակը և հանձնարարեց, վերը նշված աշխատանքն ավարտել մինչև ամսվա վերջ: Թեև մարզը 2017 թվականին սեփական եկամուտների հավաքագրման առաջադրանքը կատարել է, սակայն գտավ, որ առաջադրանքների կատարման ժամանակ սխալ է պլանավորվել, առաջարկեց յուրաքանչյուր ութ համայնքի համար հաշվարկել հարկերի վերին սահմանը:Մյուս առաջարկը վերաբերվում էր առողջապահության բնագավառի վճարովի ծառայությունները ավելացմանը, առաջարկեց յուրաքանչյուր բնակչի հաշվով ելակետայինը վերցնել 8 հազար դրամը:

Ծավալված մտքերի փոխանակությանը մասնակցեցին՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալ Մ. Հարությունյանը, աշխատակազմի ֆինանսական և սոց տնտեսական զարգացման վարչության պետ Շ. Վարդանյանը, գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Մ. Ներսիսյանը,ՏԻՄ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Ա. Հարությունյանը, կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Ա. Ղազարյանը,առողջապահության և սոցապ վարչության պետի տեղակալ Լ. Կարապետյանը, քաղաքաշինության վարչության գլխ. մասնագետ Ռ. Մինասյանը, տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ Խ.Ասլանյանը, զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ Ա. Կոստանյանը, որոնք պատասխանեցին վարչապետի կողմից առաջադրված հարցերին:

Հանդես եկան նաև՝ Վայքի, Զառիթափի և Արենիի համայնքների ղեկավարները, որոնք անդրադարձան միջհամայնքային ճանապարհների վատ վիճակին, մշակույթի և սպորտի կառույցների բացակայության և այլ հարցերի, ակնկալելով աջակցություն:Վարչապետը լսելով համայնքների ղեկավարներին, առաջարկեց հիմնախնդիրների լուծման նպատակով ներկայացնել կոնկրետ նախագծեր ու նախահաշիվներ,այլ հիմնավորող փաստաթղթեր, որից հետո միայն կքննարկվեն դրանց հնարավոր լուծման հարցերը:

Եզրափակիչ ելույթով հանդես եկավ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարը, վերջինս նշեց, որ կառավարությունը մինչև 2022 թվականը կավարտի բոլոր համայնքների նախադպրոցական հիմնարկների կառուցումը: Բարձր գնահատելով Վայոց ձորի համայնքների ղեկավարների հետևողական աշխատանքը 2017 թվականին սեփական եկամուտների հավաքագրման գործում, առաջարկեց ուշադրության կենտրոնում պահել նաև իրականացվող ծախսերը, թույլ չտալ համայնքային միջոցների չհիմնավորված ելքեր:

Վերջում իր և մասնակիցների անունից մարզպետը շնորհակալություն հայտնեց հյուրերին շահագրգիռ քննարկմանը մասնակցելու և արժեքավոր խորհրդատվության համար:

ՀՀ Վայոց ձորի մարզպետ՝ Հ. Սարգսյան